




ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐԻ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏԵՐԻՍՏԵՐԻ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ


ՇԱԿԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



29

ՀԱՄԱՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ



1. Կաթողիկէ Արձագանգը սո. այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցանկույի բաժանորդագիւնն է մեկ մեհիս անոնց համար որ ի Կ. Պօլիս Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիւելոյ համար՝ Չորս (Կ) ֆրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծառայն ու ձեռք, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանի վերջնականացիս պիտի ճշտուին: — Մեկ թիւը՝ մեկ դանդիսն է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եւրոպ. օրերը:
3. Խնքագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեանք հրատարակելոյ իրեն դիմում. ո՛ր եւ է յօդուած:
4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատւութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Դամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խնքագրութեան:
6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:
7. Ծանուցեանց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆՔ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆՈՒ

Առաջին Տարի

23 Դեկտեմբեր 1911

Թիւ 27.

ՔԱՀԱՆԱՑԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ



Հայ Ազգային Պատրիարքական Սինդոդոսին փակման առթիւն Նորին Սրբազնութիւն Պիոս Ժ. Քահանայապետ Դեկտ.ի 14 ին, մասնաւոր հանդիսաւոր Ունկնդրութիւն մը շնորհեց, բարեացակամութեամբ հաճելով ընդունիլ իւր Օգոստոսփառ ներկայութեան առջև ոչ միայն Սինդոդական Հայրերը, այլ և Սինդոսին բոլոր Պաշտօնականները, Աստուածաբանները և Խորհրդականները, Նոյնպէս ընդունուեցան Ք. Լեւոնեան Հայ Դպրոցին բոլոր առնները, ինչպէս նաև Ուրբանեան Բրօքականտա Դպրոցին հայ աշակերտները, Ներկայ էին Ունկնդրութեան նաև Բրօքականտայի Արևելեան Ծէսերու Քարտուղար Գեր. Բօլլէրի և Հայոց համար Գրադիր Գեր. Բացցինի: Ընդ ամէնը շուրջ եօթանասուն և հինգ հոգի: Ասոնք ամէնքը ժողվուեցան Վատրիկանու Պալատան մէջ Սրբ. Քահանայապետին առանձին յարկաբաժնին սպասասենեակներուն մէջ:

Ժամը առաւօտեան տառնումէկին քառորդ մնալով Ամենայ. և Գիւրերջ. Հոգեւոր Տէրն մէր Պաշտ Պատրոս ԺԳ. առանձին ունկնդրութեան հրաւիրուեցաւ Սրբազան Քահանայապետին սենեակին մէջ, ուր կեցաւ գրեթէ կէս ժամ: Այն միջոցին ներկայից խումբը առաջնորդուած էր ի Փահաւորան, և Սինոգական Հորք ըստ երիցութեան շարուեցան Փահաւոր երկու կողմը, նոյնպէս և այլք ըստ աստիճանի և կարգի: Տառնումէկը քառորդ անցնելով Սրահին մէջ մտաւ գործից Սրբազան Քահանայապետը, հետն ունեւալով զԱմենայ. Կաթողիկոսը, իր Սենեկապետը, երկու Աշնուական Թիկնապահներ: Նորին Սրբազնութիւնը այս բազմութեան, որ ծնրադրած էր, առջևէն անցաւ, մեծաւ բարեացակամութեամբ մէն միոյն ուրոյն համբուրել տալով իւր Ս. Աջը, և ոմանց զթափրաբար ուղղելով քանի մը սիրալիւր խօսք: Դէմքը զուարթ էր, շրթանքը ժպտուն, խօսքը քաղցր. իր մօտաւորութիւնը Քահանայապետական մեծփայեղութեան հետ խառն հայրական անպատուած խանդաղատանք մը, գորով մը կ'ազդէր: Երբ աննկարագրելի խնդութեամբ: Այսպէս պէտք է զգածուած ըլլան միշտ Ս. Առաքեալը, երբ Փրկիչն Յիսուս « յաւսրս մարմնոյ իւրոյ », կը քաղաքավարէր անանց հետ, իբրեւ զմի ի նոցանէ, անհուն մարգարութեամբ: Երջանիկ են հաւատացեալքն « որոց ո՛չ իցէ տեսեալ և հաւատացեն » (Յովհ. Ի. 29.), զինքը նկատելով յանձին իւր Սրբազնապետը փոխանորդին:

Անցաւ բազմեցաւ Սրբազանը իւր Փահաւոր վրայ: Ներկայք կանգնեցան սոթի վրայ: Ամենայ. Կաթողիկոսին պատրաստուած էր մասնաւոր տիպա մը Սրբազան Քահանայապետին զիմացը, ընդ աջակողմն, ուր Նորին Սրբութիւն հրաւիրեց զինքն նստելու: Բայց նա սրահին մէջտեղ յոտնկայս, տրտասանեց հետեւեալ բանախօսութիւնը՝ իտալերէն լեզուաւ:

ԱՄԵՆԵՐԱՆԵԱԼ ՀԱՅՐ

Կը կարդալիք Գործոց Առաքելոց մէջ որ օր մը Ս. Պետրոս, Յովնանու հետ եղելով ի ճանաւրն, տեսաւ մարդ մը կառ ի ծնե, որ ողորմութիւն կը խնդրէր անոնցմէ որոնք կը մտնէին ու կ'եղէին: Պետրոս յայնժամ եայելով անոր վրայ, ըսաւ. Չունիմ արծաթ եւ ոսկի. իսկ ինչ որ ունիմ, զայն կուտամ քեզ: Եւ բռնելով զայն աչ ձեռքէն, վեր վերցուց. եւ մեկէն հաստատեցան անոր ոտքերը. եւ աչն մարդը մեկ ոտքունով ուղղուելով, սկսաւ ազատուիլ քալել, օրհնելով զՏէր (Գործ. Գ. 4-8):

Ասոր նման բան մը, ո՛վ Ամեներանեայ Հայր, պատահեցաւ այս օրերուս մէջ, նկատեալս մեր ազգին: Արդե՛ն երկար ժամանակի ի վեր պէ՛տք էր զգայինք հասաստուն հիմերու վրայ ամրացնելու մեր օրհնարութեան սկզբունքները. կը փայլափայտէր նաեւ հանդիսաւոր գործով մը յայտնել մեր հաւատոյ դաւանութիւնը այն ճշմարտեանց մէջ գործնէ մեզ տրուեցուց Աստուծային Վարդապետը, եւ որոնք այնչափ դարեւու ընթացքին մէջ անվար աւանդուեցան մեզ՝ մեր մեծաշարք Նախնիներէն: Բայց ապիսկ ընելու համար պէ՛տք ունեցինք բարեացալիս աշխի մը որ խախտուէր զմեզ, բարեկամ ձեռքի մը՝ որ զմեզ ի վեր կանգնէր: Այս աջքը, այս ձեռքը, Դուք եղաք, ո՛վ Ամեներանեայ Հայր, որ, իշխանաբար գումարեցիք զմեզ եւ սիրայի՛ր ընդունեցաք այս վե՛հ Բաղափա մէջ, որպէս զի Ձեր հովսևաւորութեան ներքեւ ու Ձեր խորհուրդներուն օգնութեամբ, կարող ըլլայինք սկսիլ եւ կազմել ազգային այս առաջին Սինոդոսը, որ հիմա յաջողութեամբ ի յանգ ելաւ:

Այս ջնադ շնորհաց ուղեցիք ուրիշ մըն ալ աւելցնել, անձնիւր տրամադրութեամբ հոգ տանելով մեր շատ մը քեներուն պիտոյից, որոնք այդչափ ժամանակներէ ի վեր իրենց հովիւներէն այրիացած էին:

Թող տե՛հ, ուրեմն, որ այնչափ շատ ու այնքան նշանաւոր բարեւարտեանց համար արագին շնորհակալութիւններ մատուցանենք Ձեզ՝ նաեւ յանուն մեր բովանդակ Հասարակութեան: Այս ժողովոյն գումարումը, եպիսկոպոսաց ձեզմէ ուղղակի այս անուանումը, մեզի համար նոր եւ աննորանալի տխրութեան պիտի ըլլան, որով դեռ աւելի ամրապնդենք, երբ երբեք կարելի է, հարստութեան ու որդիական սիրոյ այն կապը, որ զմեզ միշտ զօրեց Հոռմայ, իբրեւ Արքունոյ Բաջորդին Ս. Պետրոսի, Փոխանորդին Յիսուսի յերկրի սաս:

Այո՛, Ամեներանեայ Հայր, մեզի կը սեփականենք մեծին Ս. Հերոնիմոսի խօսքերը. « Երբ մեկը Պետրոսի Արքունոյն կը միանայ, ինչ է »: Ձեզի տուեցաւ առաքելական պաշտաման լրութիւնը. Ձեզի յանձնուեցաւ Ձեր եղբայրները հաւատքի մէջ հասաստելու պարտքը. իրաւասաց կը նստիք ճշմարտութեան եւ մոլորութեան մէջ. արահապանն էք այն ճշմարտեանց՝ գործնէ դաւանելով իրենց անբողոքեանք եւ անստատեանք, ազատ կ'ըլլանք որդիք Աստուծոյ: Ուստի մեր փառքն է, մեր պարծանքն է, բարձրաձայն քարոզել Ձեր անսխալ իշխանութիւնը, մեր քաջը պարտքն է կատարելապէս հնազանդիկ Ձեր տրուեցուցածներուն:

Եւ հիմա, Ամեներանեայ Հայր, մեր գաւառները դառնալու վրայ ենք: Աստուած միայն զիտէ քե ի՛նչ պիտի պատահի մեզ յապազային: Այլ զայս կը նախազգանք քե միշտ եւ նեղութիւնք արահուած են մեզի, որովհետեւ Առաքելոյն

խօսները անդադար կը հնչեն մեր տխրանքներուն . « Կապակն եւ նեղութիւնք մնան ինձ » (Գործ. ի. 23.) : Բայց Աստուծոյ օգնականութեան վրայ վստահելով՝ կրնանք նոյն Առաքելոյն հետ սպասելութեանը աւելցնել . « Այլ ասոնց եւ ոչ մեկին կը վստահեմ . եւ ինքս զինքս բնաւ պատուական չեմ համարիր . միայն թէ կատարեմ իմ ընթացքս ուրախութեանը , եւ այն պաշտօնը զոր առի Տէր Յիսուս Քրիստոսն , վրայ ըզրպառ Աստուծոյ շնորհաց Աւետարանին » Անդ . 24 .)


Մեզի ապաստող նեղութիւնները հանրերութեանը ճանելոյ համար , մեզի մեծ գործաւիգն պիտի ըզրպառ , ո՛վ Ամենեւեանեայ Հայր , Առաքելական Օրհնութիւնը , զոր յամենայն սրտէ կը հայցեմք մեր , եւ մեր կղերին ու մեր ժողովոյրոց վրայ : Ինն եւ ժամն դարեւտ աւելի է որ Աւետարանի քարոզողներու անընդհատ շարք մը եղաւ այս Հռովմէն , զօրացած Հռովմայ Սրբազան Քահանայապետներու օրհնութեանը , երբայն համար աշխարհիս սղելաւոր մասերուն եւ ճանելոյ Յիսուսի Քրիստոսի Աւետարանը . եւ այս օրհնութիւնը անոնց ամենուն համար յաղթութեանց եւ դափնիներու առհաստակեայ եղաւ : Ձեր օրհնութիւնը մեր կաթողիկէ ժողովոյրոց համար պիտի ըզրպառ փրկութեան նշան մը , որով պիտի յարասեմք իրենց նախնեաց հաւաստին մէջ , իսկ մեր բաժանեալ եղբարց համար , որոնք աւանդ , անսարքերութեան եւ անկօնութեան աշխարհի ողբին վստահութեամբ են , որ եւ բոլոր աշխարհիս վրայ կը ջնջի , պիտի ըզրպառ հայրական հրաւեր մը դառնալու ի փարսան Քրիստոսի : Այս օրհնութիւնը մեր խանանայից եւ մեզի , ով Ամենեւեանեայ Հայր , քանկագին խրախոյս մը՝ խնդագին շարունակելոյ մեզ յանձնուած նուիրական ու դժուարին պաշտօնան մէջ , սպասելով գրաւական մը այն երկնային օրհնութեանց , որոնք մեզ կը սպասեն երանելի հայրենեաց մէջ :

Սրբազան Քահանայապետը մեծաւ ուշադրութեամբ կը հետեւէր այս ճառին . որ երբ աւարտեցաւ , ինքն հաճեցաւ յանպատրաստից պատասխանել , յուզեալ եւ համոզուած շեշտերով : Իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց առ Պատրիարքն , որ իւր եւ Սինոդական Հարց անուանով կուգար իրեն արտայայտելու այս բարի եւ գովելի զգացումները , որոնք կը բղթէին իրենց ճշմարիտ Կաթողիկէի եւ քաջ հովուի սրտերէն . շնորհաւորեց այս ազգային Սինոդոսին յաջող ելքը , որ Աստուծոյ օգնականութեամբ այսպէս պատկուելով մեծամեծ արդիւնքներու աղբերակն պիտի հանդիսանար Հայ-Կաթողիկէ Հասարակութեան համար : Կատարելապէս վստահ էր ինքը Նախնայապետութեան կողմանէ յայտնուած այս զգացումներուն , հնազանդութեան եւ անանջատ միութեան ընդ Աթուոյն Սրբոյն Պետրոսի . վստահ էր որ իրենք իրենց մէջ ալ միշտ պահելով փափաքելի այս միութիւնը ,

անդուլ անդադար պիտի աշխատին ի փառս Աստուծոյ և ի բարգաւա-
ճանս Կաթողիկէ Եկեղեցւոյ, որով միայն հնարաւոր պիտի ըլլար Սինո-
դոսին արգելանաւորումը, զոր Ինքն հրամայած էր ի Հոսմ գումարել,
ինչպէս նաեւ միւս կարեւոր տրամադրութիւնները: Այս Սիւնահոգոսը ո՛չ
միայն Հայոց համար գովելի եղաւ, այլ իւր միաշունչ միահոգի գործելու
եղանակաւ մեծ տպաւորութիւն գործեց և օրինակ բարեաց հանդիսացաւ
նաեւ Հռովմայեցոց, որոնք մեծաւ ուշադրութեամբ հետեւեցան անոր: Մտա-
գիր լսած էր Ինքն այն տկնարկութիւնը զոր Պատրիարքն ըրած էր վշտե-
րու և հարածանաց: Պօղոս Առաքեալ ամենամեծ օրինակ է մեզ յայսմ մա-
սին թէ՛ իր խօսքով թէ՛ իր կենաց պարագաներով: Արդէն քահանայի
կիսնքը վշտերու և հալածանքի կեանք պէտք է ըլլայ, քանի որ Քրիստոս
Տէրն մեր զայն իրրեւ պայման առաջարկեց իր աշակերտներուն՝ ըսելով.
« Եթէ զիս հալածեցին, ուրիմն զձեզ ալ պիտի հալածեն »: Այնպէս որ
հալածուիլը նշան է կրօնքին ճշմարտութեան, եթէ չհալածուէինք, պիտի
ստորակուտէինք Կաթողիկէութեան ճշմարտութեան վրայ: Այսու հանգերձ
պէտք է վստահ ըլլան ամէնքը, որ չկարծուածին չափ բազմաթիւ են ի-
րենց մէջ բարիները, որոնք սիրով պիտի փառին և հնազանդին իրենց
հովիւներուն. նոյն իսկ հետադիւրէն շատերը իրրեւ գառնուկ պիտի ըլ-
լան և հնազանդին ձեզ, հազիւ երթաք իրենց մէջ: Յոյս մեծ յայտնեց
Սրբազանը որ ամէն բան խաղաղութեամբ պիտի յարգարուէր Հայ Կաթո-
ղիկէ Հասարակութեան մէջ, և յարեց. « Ոչ միայն յոյս ունիմ, այլ և
գրեթէ ոտուգութիւն յայսմ մասին »: Անսահման վստահութիւն զրած էր
Ինքն Աստուծոյ օգնականութեան վրայ: « Հիմա, ըստ, պիտի բաժնուինք
իրարմէ. դուք հեռու պիտի երթաք, աշխատելու Քրիստոսի համար, բայց
հեռաւորութիւնը չբաժնիր զմեզ, դուք լինձի համար պիտի աղօթէք, և
ես ձեզի համար. ամէն ուղաւոր Ս. Պատարագի մէջ իրարու պիտի հաւ-
գիպինք, և այսպէսով պիտի հասնինք մեր միակ փափաքին, մեր վերջին
վախճանին, որ է երկնաւոր անանց փառքը »:

Ապա ոտք ելլելով, օրհնեց ամէնքը, օրհնեց նաեւ ռմբոյզ Հայ-Կաթո-
ղիկէ Հասարակութիւնը:

Եւ կրկնելով իր հայրական մաղթանքները, մեկնեցաւ:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէպէտեւ կուսակցական թերթեր կը շարունակեն իրենց շունթալից, անվայել և դիտումնաւոր գրութիւնները, Ամենապատիւ և Գերերջանիկ Հոգեւոր Տէրոջ, այսինքն՝ Օրինաւոր Իշխանութեան դէմ մղուած պայքարը հասած է այլ ևս իր վախճանին:

Ինչ որ Սաբըզ Աղաճի երեսփոխանական կոչուած ժողովը — յուզիչ և զայթակղեցուցիչ նիստերէ վերջ — չի կրցաւ ի գլուխ հանել, անհետատես, անփափկանկատ և անտրամաբան գործունէութեան պատճառաւ, Հայրապետն թէրզեանէ կրցաւ ձեռք ձգել, անաղմուկ, անայլայլ, օրինակելիօրէն ճշդապահ և տրամաբան յարաւեւութեամբ մը որ պատիւ պիտի բերէր Եւրոպայի առաջնակարգ քաղաքագէտին: Երկուքին ալ նպատակն էր բարեկարգութիւն: Մին չափազեցաւ, որովհետեւ օրինապահութեան և կարգապահութեան վարժուած չլլալով, սկզբունքի խնդիր մը դարցուց անձնական like և dislike ի: Միւսը հասաւ իր նպատակին, որովհետեւ օրինապահութեան և կարգապահութեան խիստ դպրոցին մէջ մտած ըլլալով խնդիրը քննեց բուն իսկ արմատէն և անոր համամատ վճռեց:

Ինչ որ ալ ըսուի կամ գրուի, ի զուր է: Հայ Կաթողիկէ հասարակութիւնը կը գտնուի օրինաւոր իրականութեան մը առջև որ կատարուած է: Վայրկեան մը ենթադրելով որ Ամենապատիւ և Գերերջանիկ Հոգեւոր Տէրը հրաժարի, իր կամօք և ոչ ստիպման տակ, բան մը մը բնաւ չենք փափաքիր և կանխաւ ներում կը խղրենք Նորին Ամենապատիւ Գերերջանկութիւնէն այսպիսի ենթադրութիւն մը նոյն իսկ պատճառաւորանութեան նպատակաւ մեր մտքէն անցած ըլլալուն համար, վստահ ենք որ ներկայ ընթացքը պիտի չփոխուի, որովհետեւ չի կրնար փոխուիլ:

Արդէն, « եղածին դէմ խորհելու, խօսելու, դժգոհելու իրաւունք չունի և չի կրնար ունեալ — ոչ ոք, ոչ իշխանութիւն, ոչ վաղեմի սովորութիւն, ոչ ժողով, ոչ արածնութիւն: Այս բանս Սրբազան Հայրն ըրաւ, կարգադրեց, Աստուծմէ իրեն արուած իշխանութեան զօրութեամբը: Ինք իր յատուկ ձեռքովը պատուեց նաեւ ամէն մէկ անուանուած Եպիսկոպոսական խաչով մը »: « Այս բանս չհատկացողին՝ ամենայն իրաւամբ կրնայ ըսուիլ թէ՛ ո՛վ որ չունի իրեն՝ զեկեղեցին մայր, չունի նաեւ իրեն՝ զԱստուծո՛ւ հայր »: (Բաժակածառ Արհ. Գովորիկեան Արքահօր):

Կարժէ որ ամէն գիտակից և նախանձախնդիր Հայ Կաթողիկէ, թող
վայրկեան մը քէն ու ռի, և նկատի առնու այս խօսքերը և խորհըր-
դածէ անոնց պարունակութեանը վրայ: Պաշտօնական ազգարարութիւն-
ներ են, պաշտօնական անձի մը կողմանէ, պաշտօնական շրջանակի մը
մէջ պաշտօնապէս կատարուած: Երկդիմի խորհելու, խօսելու, գրելու
տոտն չէ այլ ևս: The right man to the right place. Ամէն մարդ,
ըլլայ ան եկեղեցական, ըլլայ ան աշխարհական, պարտի ճշդի իր դիրքը
և վարուիլ ըստ այնմ: Կանոնի շրջանն է որ պիտի սկսի, մինչև հիմա
առանց կանոնի ընթացող նախապետութեան մը մէջ: Ազմուկի ժամանակ
չէ, և ոչ ալ սոփիստութեան և քմահաճոյքի. Deeds — not words!
Act - Act in the living Present! steart within, and God over-
rhead! Հասարակութեան նիւթական և բարոյական պետքերը կը պահան-
ջեն, աւելի քան երբեք, հանգարտութիւն, սնշահախնդիր դործունէու-
թիւն, ամօքելու համար գազանայլն վարչութեան մը և ոչ նուազ տգէտ
արարքներուն — պատճառած ծանր վէրքերը: Հարկ է լրջօրէն և անա-
չաօրէն նկատի առնուլ նոր կացութիւնը, այնպէս լինչպէս որ նա կը
ներկայացուի մեզ: Եթէ, հաստատուի, լուրջ քննութենէ մը վերջ, որ
կան, յիշուի, անոր մէջ կէտեր Երոնք ընդդէմ են Հասարակութեան նիւ-
թական և բարոյական յառաջագիմութեան — ինչ որ չենք կարծիր —
այն ատեն թող բացայայտօրէն և պատշաճօրէն պատճառարանուին: Բայց
չիմարութիւն է յարուցանել, վճիռէն առաջ, A storm in a teacup:
Ներկայ տրամադրութիւնները ցաւալի են, ոմանց համար. փոփաքելի են,
ուրիշներու համար: Ամէն պարագայի, անոնք լի են տրգասիքով: Ան-
պայման հարկաւոր է որ ողջմտութիւնը — որ կուսակցական սովորական
և, ինչպէս որ տկանատես ենք, օտորին պայքարներէ գեր ի վեր է, ան-
գամ մը ևս յաղթանակէ և արգելու որ Հայ Կաթողիկէ Հասարակութիւնը
մատնուի ապարդիւն վէճերու և գայթակղեցուցիչ կռիւներու, որոնց ան-
դադար կակնարկէ « Մեծմուտ », չգիտենք ինչ մտադրութիւնով: Հին գրու-
թիւններու, նոյն իսկ պաշտօնական կործուած գրութիւններու, վերադին
հրատարակելը կրնայ հետաքրքրել բանասէր մը. բայց կարող չէ բարի
տրդիւնք թերի ներկայ ամէն տեսակետով կնճուախնդրի մը մէջ: Պէտք
չէ ևս առաւել գրգռել տրդէն իսկ յազեալ միտքերը. անկարգութեան
հրաւիրելով ժողովուրդ մը որ կարող է — անգիտակցաբար — վտանգել
իր իսկական շահերը, և պատճառ ըլլալ անուղղակի — երբեմն ալ ուղ-
ղակի — միջամտութեան: Արդէն, ամէն անոնք որ անաչաօրէն ուսումնա-

սիրած են հասարակութեան մը — հետեւաբար և ազգի մը — յառաջագիծութիւնը, ակամայ հասած են սա եզրակացութեան թէ. « Ազգերը ի « սկզբան չեն կառավարուիր օրէնքներով և ոչ ալ բռնութեամբ: Ինչ « որ ալ եղած կարծուի նախնական իշխանութիւնը, ըլլայ ան բռնութիւն « թէ կոնոն, երկուքին ալ ազդեցութիւնը, արդարեւ, պարզապէս ձեռքն- « տու է նպատակի մը: Ազգերը կը կառավարուին մի և նոյն մեթոտով « և մի նոյն սկզբունքներով, որով անձ մը — առանց իրաւասութեան — « յաճախ կարող է առաջնորդել իրեն հաւատարմները կամ իրմէ բարձրե- « ըը, քննելով անոնց բնութիւնը և իմաստութեամբ վարելով զայն: Ըսել « կուզենք, երբ հանրային գործերը կը մղուին յառաջ — անգագար — « առանց աղմուկի, և ոչ թէ՛ երբ վարչութիւնը կը ըլլայ լոկ մաքառում « մը, անընդհատ, տառնակալին և ամբոխին միջև, մաքառում մը՝ յորում « երբեմն այս, երբեմն այն կը յաղթանակէ: մաքառում մը՝ յորում երկուքն « ալ կարգաւ կը խմբարհին և կը բարձրանան, կարգ մը արհամարհելի « յաղթանակներով և գայթակղակից հպատակութիւններով »: (էտմընտ Պըրք):

« Պարագայից ստիպման տակ է որ, Ամենապատիւ և Գերերջանիկ Հոգեւոր Տէրն մեր հարկադրուեցաւ, Եկեղեցւոյ տեսանելի Գլխուն տնօրի- նութեամբը, բացառիկ կերպով և այս անգամուան համար միայն, կատա- րել նոր Եպիսկոպոսաց անուանումը և ձեռնադրութիւնը »: Թէպէտեւ այս կարգադրութեանց դէմ լուեցան անհնազանդ ձայներ, օտար ազդեցու- թիւններէ մղուած, սակայն չենք տարակուսիր որ երբ Արհապատիւ Հարք « երջանկարար վերադառնան իրենց թեմերը, պիտի դադրին — և պէտք է որ դադրին, ընդհանուրին բարւոյն համար — քիչ առենէն, չնորհիւ Աստուծոյ տուած շնորհաց և օգնութեան, իրենց դէմ մղուած կամ մղուելիք որ և է պայքար, հալածանք, նեղութիւն », բաւ է որ, սակայն, անոնք չի դադրին ապաւինելէ Աստուծոյ բարութեան և երկայ- նամտութեան և քարոզին Անոր խօսքը, առանց փոխելու զայն: Ինչպէս որ կըսէ Արհապատիւ Օգոստինոս Արքեպիսկոպոս Սայեղեան, « Կրօնքի և կաթողիկէ սկզբանց դատը կը վաստկուի միայն աղօթքով, եղբայրսի- րութեամբ, հեղութեամբ և համբերութեամբ »: Փոխանակ հանրային միտքը գրգռելու տարւոյ այս նաւերական Եղանակին Յիսուսի Քրիստոսի Տեսան մարդ յառաջիկայ Ծննդեան տօնին, խնդրեն Վշտակիրէն — որ ինչին վրայ գոչեց « Հայր, թո՛ղ դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն » — թողութիւն իրենց գործած ներքին սխալներուն համար, և հայցին նոր

ողեորութիւն և հոգեորութիւն Հայ Կաթողիկէ Հասարակութեան համար,
ինչպէս իրեն ծնունդը տուաւ նոր կեանք՝ տարապող և մոլորեալ մարդ-
կութեան:

« Փառք 'ի բարձունս Աստուծոյ . և յերկիր խաղաղութիւն , 'ի մար-
դիկ հաճութիւն » :

Աղեքսանդրիա 17 Դեկտեմբեր 1911

Ձր . Մալխաս .

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ Լ. ՀԱՅ ՎԱՐՁԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ՀԱՆԴԻՍ ՄԸ

Ի ՊԱՏԻՒ ԱԻՆՀՈՒՌՈՍԱԿԱՆ ՀԱՐՑ

Կիրակի օր , 17 ամսոյս , չքեղ հանգէս մը կատարուեցաւ ի Հռոմ՝
Ք. Լեոնեան Հայ Դպրոցին զարգաստանին մէջ : Արհի . Նազլեան Եպ . ,
Մեծաւոր Դպրոցին , փափուկ մտածումն ունեցած էր անակնկալի ձևով
յարգանք մը մատուցանել Սինհոդական Հարց , տօնախմբելով Ազգային
Պատրիարքական Սինհոդոսին յաջողութեամբ աւարտին ու փակումը :
Հետեալար հանդիսութիւնը ուղղակի ազգային գրոշմ տուած էր : Հրաւի-
րուած էին Բրօքանտայի Քարտուղար՝ Մօնս . Բօլլէրի , և Գրագիրն
Վան Հայոց՝ Մօնս . Բացցլինի . բոլոր Աստուածաբաններն , որոնք մաս-
նակցած էին Սինհոդոսին , Մօնս . Գօնրատոյ , Ուրբանեան և Քարբանիքա
Դպրոցներուն Մեծաւորները , ևն . նաև քանի մը բարձրապատիւ աշխար-
հական անձեր :

Առաւօտեան ժամը 11 ին սկսաւ հանդէսը , որ ի Հռոմ կը կոչուի
Accademia , և կը բաղկանայ այլեայլ լիզուներով ստանուոր և արծաի
բանաստեղծութիւններու արաստանութենէն , ընդմիջուած երաժշտական
և ձայնական կտորներէ :

Սրահին մէջ խմբուեցան Սինհոդականաց հետ միւս հրաւիրեալք և
Դպրոցին աշակերտք . կը նախագահէր Ամինապ . Կ . Պատրիարքը : Բրօքէս-
սօր Տ . Անթօլիզէի վարչութեան տակ երգիչներու խումբը հնչեցուց Քա-
հանայապետական երգը քառածոյն , Oremus pro Pontifice nostro Pio , ա-
հեղ շեշտերով : Ապա Արհի . Նազլեան Եպ . Մեծաւոր Դպրոցին բանախօ-
սութիւն մը կարդաց Սինհոդոսին աւարտման մասին , լի գեղեցիկ խորհրդ-

դածութիւններով. զոր և գահաձեռնութեամբ պիտի հրատարակենք Ար-
ձագանգիս մէջ:

Մէկ ժամէն աւելի տեղութեամբ իրարու յաջորդեցին, այլևայլ լի-
զուններով, ընդմիջուելով երգերէ, և խրաքանչիւրն իր մասին խլիղով
ներկայից գահաձեռնութեան ծափերը: Հայերէն գրաքաւը, զոր կարգաց Պ.
Քէտրիճեան Պօլսեցի, նկատեց զՍիւնհոգոս իբր խարխալ փրկութեան. հայ
Եկեղեցւոյ համար: — Հասիներէն կարգաց Յարգ. Յովս. Վ. Քրիշճեան.
Սինդոսին ի Հռոմ գումարուելուն պատշաճութիւնը շեշտեց, ուր հաստա-
տուն հիման վրայ կրնայ դրուիլ ո՛ր և է հոգևորական շէնք. զի հոն գրուած
է անյաղթելի հիմն Եկեղեցւոյն Քրիստոսի: — Թրքերէնը արտասանեց Յարգ.
Յովհ. Վ. Գալստիճեան, Ատանացի, ակնարկելով Սիւնհոգոսի փախման՝
Ս. Կուսի Աստուածամօրն Անարատ Յղութեան Տօնական օրը զուգու-
ղիպելուն: յիշեցուց թէ՛ Բենեդիկտոս ԺԴ. Քահանայապետը մեր Պատրիար-
քութիւնը վերահաստատելուն, զայն Անարատ Կուսին պաշտպանութեան
ներքեւ դրած էր. Նոյնին կը նուիրեն Սինդական Հարք իրենց արգիւնա-
րեր աշխատութիւնը. որպիսի՛ ուրախութիւն տահաւատչեայ: Քանի՞օն մեծ
« խորխիս յուսոյ հաստատութեան »: — Արաքէրէնը կարգաց Ա. Նէս-
մեան: Դրուատեց նորընտիր Եպիսկոպոսաց անուանումն ու Ձեռնադրու-
թիւնը. այս դէպքին առջև հայ կաթողիկէ Եկեղեցին, նկատի առնելով
նոր Հովուաց արժանաւորութիւնը, կրնայ իրաւամբ կրկնել. « Նորոգեա-
ցի որպէս արծուոյ մանկութիւն քո »: — Գաղղիերէնն ընթերցաւ Յարգ.
Մալճեան, Մարաշցի, զարթուցանելով պատմական կարեւոր յիշատակ մը:
Եւգինիոս Դ. Ս. Քահանայապետը ձեռնարկեց Փլաքենտիոյ աիեղերական
Ժողովոյն դումարման, Արեւելքի բաժանեալ Եկեղեցեաց միութիւնը կատա-
րելու համար: Այս ժողովոյն Պաշտպան կը հռչակէ զՍ. Նիկիոյոյ Տոհմ-
տիւնեան: Հայ Եկեղեցին անոր մէջ սիրայօժար յայտնեց և խոստովանեցաւ
իր կատարեալ և անխախտ միութիւնն Հռովմայ Եկեղեցւոյն հետ, « որ
Մայր է և Դատիարակ և Գլուխ ամենայն Եկեղեցեաց »: Արդար է ա-
պաքէն մեր ցնծութիւնն ու վստահութիւնը, երբ այս Ազգային մեծ Սիւն-
հոգոսը կատարուեցաւ ի Հռոմ. նոյն Ս. Նիկիոյոյ Եկեղեցւոյն մէջ, ընդ
հզօր պաշտպանութեամբ այն պանծալի Երկնաքաղաքացւոյն: — Իտալե-
րէնը կարգաց Անտոն Սոկլ. Գաբրիէան, Ռուսիացի. փառարանեց մեր
ազգին նախադարձումն առ Ս. ՍԻՐՏՆ Յիսուսի: Ընտանիքներ մարդկային
ընկերութիւններ կը քայքային, ի կորուստ կը մատնուին, որովհետեւ կը
հեռանան ի Քրիստոսէ Աստուծոյ կը փախչին իրենց կենդրոնէն, որ է Ա-

նոր Ամենասուրբ Սիրտը: Երանելի և երջանիկ է այն ազգը որ այս սիրազեղ կենդրոնին միացած է առաձգական աստուածային Սիրոյ մէջ հրկիզեալ, և կը բացագանչէ ազգովին. « Սէ՛ր անուն՝ Յիսուս, Սիրով քով ճմերա՛, Սիրտ իմ քարեղէն »: « Հայերէն աշխարհաբարը արտասանեց Յարգ. Յովս. Վ. Յօղունի: Յուզեալ շեշտերով ուղերձ մ'ըրաւ Սինդակասն Հարց. Դուք, ո՛վ Հարք, այս եկեղեցուէր և ազգօգուտ խորհրդակցութիւնները աւարտելով, Մովսիսանման կ'ըջնէք այժմ ի նոր Սինայէ, եօթնարկուր Մայրաքաղաքէն Կաթողիկէից, ուր կը բնակի Աստուծոյ Հոգին և Քրիստոսի Փախանորդը, իբրեւ ի մօրենւոյն որ չայրիր, թէև հալածանաց կրակէն պաշարեալ, Աստուծոյ անմահ և անսուտ Խօսքը, որով զօրացած, օրինաց տախտակներն ի ձեռին, պիտի դառնաք Ձեր ժողովուրդներուն փրկութիւն տանելով անոնց. « Տէ՛ր, կեցո՛ զորդիս քո, զորս ի Հռոմայ Գահիցն վերապատուեցեր »:

Քաղցրանուագ երգը կընդմիջէր մերթ ընդ մերթ քերթութեանց միմանջները: Երգը, իւր անեղաշունչ ոճով կ'ոգեւորէր սրտերը, և՛ մտաց ըմբռնումէն խուսափուկ, իւր ազգած խորհրդոց հեղեղներով, կը նուաճէր հոգւոյ զգայութիւնը, և յանհուն եթեր թռիչ կուտար կը սլացնէր զայն: Երգերը, յօրինուած էին Հայոց համար, ազգային սէրը կ'ազուցուէր անոնց մէջ կրօնքի սրբազան զգացմանց հետ, ազգային սէրը կը նուիրագործուէր աստուածային Սիրոյ անհուն լոցերէն ներքնասուղլուած, մատնանշիլով այն Սիրտը, Սիրտն Անոր՝ որ ըսաւ, « Աստուած նախանձոտ եմ ես », որ իւր անհաս և անմեկնելի Սիրով, կ'ազազակէր. « Ով որ իրենները սիրէ Ինձմէ առելի, արժանի չէ Ինձի »: Այն սիրով ստիպուած, պիտի երթան իրենց հօտերուն, ողջադուրեւու, մխիթարելու, օրհնելու, արածելու, սորվեցնելու, ի փարախ առաջնորդելու, երանի՛ թէ չգտնուին անաստներ, զորս պարտաւորին սատուել, « Սէնն Քրիստոսի ստիպէ զմեզ »:

Անոնք, որդիք Հայոց, որք հաւատոյ սիրովն գիւցտգնացան, նահատակեցան, մարտիրոսակա՛ն արիւնով կարմիր ներկեցին իրենց ձորձերը, անոնք, որդիք անզուգական Հայրապետներու, որք կեանքերին մաշեցին ուսուցման և չարչարանաց մէջ, պիտի արխանան անոնք անվեհեր, և պիտի վազեն աւետարեր առաքեալներ, ցնցելով կրօնից սուրբ ջահը, և լուսաւորելով « զխաւարային կողմանս »: Հոն, Ս. Սրտի արձանին առջև նստած են անոնք, երեք Մեծերու անդրիններէն չըջապատած. հոն իրենց վրայ կը սեւեռէ որ խորաթափանց ըրբերն՝ գերիմաստն, անմահն Լեւոն ԺԳ. հիմնադիրն Դպրոցիս և իւր խանդաղատած միակ հայ Ծիրանաւորն,

ամենաման Հայրապետն, Անտօն Պետրոս Թ. Հասուն, երջանիկ յիշատակաւ .
 և ահա կը գուրգուրայ իրենց վրայ մեծագործն Պիոս Ժ. , բարենորոգիչն
 ամենայնի ի Քրիստոս . երեք սիրազեղ սրտեր Հայոց համար, այս երեք
 Մեծեր, ո՛հ ինչ յիշատակներ, սիրոյ խանդավառ այս երգերուն մէջ, վսեմ
 երկնագգեցիկ շնչտիրով : Պէտք է շարունակեն ազօթելու, պաղպտելու,
 գթութիւն հայցելու ձեռք ձեռքի տուած, պէտք է կանգնեն ստորան-
 կեալ այս խեղճ ու բարի Հասարակութիւնը, պատկառ կալով սրբութեանց,
 ամենեւոր չար սգւոյն դէմ, ամենապիղծ անոր շունչին դէմ թունալից . միշտ
 կազմ և պատրաստ, միշտ քաջագօտի զօրականք Քրիստոսի, մարտնչիլ
 ընդդէմ ազգաց, ո՛րք իրենց հօտը կը ճգնին բաժնել Քրիստոսէ, և առա-
 թուր կոխել իրենց սրբութիւնները . քանզի լաւ ևս է մեռնիլ, քան տես-
 նիլ այսքան չարիք, հասած իւր ազգին և Սրբութեանց : Այսպէս թրթռա-
 ցին գործիքներն երաժիշտներու և նուագեցին ու երգեցին քաջալարժ
 պատանիները, ի մեծ հաճութիւն ներկաներու, որոնք ի փառաւորութիւն
 հայ ազգին կը ծափահարէին խանդավառ :

Շքեղ սեղան մը սարքուած էր, որուն նախագահեց Ամենապ. Կ.
 Պատրիարքը, դէմն ունենալով գրեթէ . Բօլլէրի, և շուրջն՝ Սինոդականներն,
 Աստուածաբանները և միւս ամէն հրաւիրեալները : Ս. Քահանայապետին
 կարգ. Կօթթիլի և Կ. Պատրիարքի կենաց բաժակներ սուաշարկուեցան :
 Բերիւյ Արքեպ. Սայեղեան Օգ. Գերապայծառ խտալերէն երկայն իմաս-
 տալից բաժակաճառ մ'արտասանեց, զոր պիտի դնենք յառաջիկային :

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Երկուշաբթի օր, Դեկտ. 18, մեկնեցաւ ի Լէմպէրկ Արհի. Յովս, Արք. Թէոտորովիլի
 Երեքշաբթի, Դեկտ. 19, մեկնեցան Աղեքսանդրիոյ համբով, Արհի. Կիւլեան, Սա-
 յեղեան և Մալոյեան Արք. ներ և Քէրլիքեան ու Գուգեան Եպ. ներ :

Փ. Պիսնի

Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քահանայապետական Ունկերութիւն	եջ	325
Խորհրդածութիւններ	»	330
Քահանայապետական Լ. Հայ Կարժարանին մէջ Հանդես մը ի Պատիւ Սինոդոսական Հարց	»	333
Տեղեկագրական	»	336

